

բառերուն հեղեղը, զգայնութիւններուն գրեթէ կազային նկարագիրն էր նոյնքան մը պատճառ սա անբաւականութեան: Իր վազքին մէջ, ինչպէ՞ս ճարեր անիկա ատեն ճշդելու, չափելու, մասնաւորելու՝ իր զգայնութիւնները, հաւանաբար մեղքովն ալ աճապարոտ իր ջիղերուն, որոնք ուրիշներուն դիմագիծերը կրցեր էին կրել իրենց ուղեղացանցէն, բայց չէին կրցած իւրացնել անոնց իմաստը: Աս էր պատճառը, որ իր վարպետները, հայր՝ ինչպէս ուսւր, միշտ այդ Մոսկուայէն, մնային դէմքեր, այլայլուն, եղծանկար, քիչ մը դոնդող նոյնիսկ, ամէն անգամ, որ Մաթիկ ըլլար ստիպուած զանոնք տեղակացրնելու, ու դառնային խորհրդանիշ սրբութիւն, երբ վերցրւէին հոգեկան անուախաղացքին, այսինքն՝ ուժերու այն կրկէսին, ուր գործող մղումները, զիկզակող ուղղութիւնները մարմինէն դուրս ուրիշ կեդրոններէ կը թուինք առնել, երբ գրեթէ խելագար, մեր մտասեւեռման փխտոններուն ձեռքը կը սկսինք դառնալ ու դառնալ, մինչեւ... մեր քայքայումը: Ա՛ն էր, որ իրեն վիճակով ինկած թուղթը կարդալէ ետք, անաղմուկ, անբառ կը քաշուի կամացուկ իր տնակը, տունը, կը պագնէ քնացող օրանի տղան ու լացող կիներ ու կ'աճապարէ դառնալ հասցեագրուած վայրը, գործադրելու համար կամքը թուղթի այդ կտորին, մահը տալու համար աս ու ան իշխանաւորին, մատնիչին, անիկա սեւեռելի մէկը չէ մեր պայմաններով:

Ի՛նչ խանդավառութեամբ Մաթիկ կը խոչորցնէր ռմբաձիգ տղաքը, որոնք կարող էին մահն իսկ ենթարկել տեռորի, եթէ նման հրաման մը գար իրենց ու այդ մահն ալ սանկ ձեւ մը դառնար: Բայց բան մըն ալ ստոյգ էր իմ մէջը.- ատ՝ գիտակցութիւնը որոշ անբաւարարութեան մը սա մարդերը արձակելու, անոնց իրական անձնաւորութիւնները վերլուծելու, աւելի պարզ բացատրութեամբ մը՝ քակելու: Ու ասիկա հակառակ Մաթիկին ապահով հոետորութեան ու ականատեսի անհերքելի ոլորտին, որմէ կ'ազդուին մեր պատկերները, ապրուածը այնքան այլայլուն ցոյց տալով, երբ մտացածինը չի տառապիր իր